

ՏԻԱՐ ՅԱՎՈՒԲՃԱՆ ԵԱՂՈՒՊԵԱՆ

Եկեացեի զիշերային արարողութիւնները, որոնք պիտի կրկնուին մինչև Ս. Զատիկ, ամէն Երեքշաբթի և Հինգշաբթի իրիկունը, Իւրաքանչիւր Եկեացեի արարողութեան նետ պիտի կատարուի նաեւ քարոզխօսութիւն Ս. Աթոռի հոգեշնորհ վարդապետ հայրերու կողմէ: — Այսօր քարոզեց Գեր. Տեղապահ Հայրսուրբը:

* 21 Մարտ Դշ. — Այսօր սկսան Մեծի Պահոց Արեւազալի հանդիսաւոր արարողութիւնները, որոնք մասնաւոր հանդիսութեամբ պիտի կրկնուին մինչև Ս. Զատիկ ամէն Զօրեքշաբթի և Ուրբաթ օրեր: Նոյն արարողութիւնը կը կատարուի Մեծ Պահոց բոլոր մնացեալ օրերուն և ս, սակայն աւելի թեթեւ զնացքով մը:

* 25 Մարտ Կիր. — Անտաղիկի Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Լընչտակապետ: Պատարազեց Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան, քարոզեց Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան, մեկնաբանելով Անտաղիկի աւետարանական առակը:

* 26 Մարտ Բշ. — Եւրոպացւոց Ս. Զատիկի տօնին առիթով Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեանի և Տիար Կարպիս Լինդլեանի, շնորհաւորութեան զնաց նախ Անկլիքան Եպս. Գեր. Ստուարթին և ապա Լուստրականներու ներկայացուցիչներ՝ Տօքթ. Մօլի և Տիար Յ. Միլիքեանի:

— Ի զիմաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան ընկերակցութեամբ Հոգ. Տ. Յակոբ Վրդ. ի, շնորհաւորութեան զնաց Մարտին համայնքի Գեր. Եպիսկոպոսին:

* 27 Մարտ Դշ. — Առաւօտեան ժամը 9ին, Գեր. Տեղապահ Հայրը՝ Միաբան վարդապետներու և զոյգ մը սարկաւազներու ընկերակցութեամբ, շնորհաւորութեան զնաց Ֆրանչիսկեանց Միաբանութեան Գեր. Գիւսթօտին և ապա Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին:

— Իսկ ի զիմաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայկասեբ Վրդ. Պայրամեանի և երկու բարեշնորհ սարկաւազաց, շնորհաւորական այցելութիւն տուաւ Յոյն-Լատինականներու Հոգ. Տեաշին:

— Կէսօրէ առաջ, ժամը 10.30ին, Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեանի և Տիար Կարպիս Լինդլեանի, տեղւոյս Զինուորական Հրամանատարութեան հրաւերին ընդառաջելով, ներկայ գտնուեցաւ Սոցալակոյտի շքանշաններու բաշխման հանդէսին, նորին Վեհափառութիւն Ապտալլա Ա. Թագաւորին կողմէ, Մատենա-Սոցոսի բանակատեղիին մէջ: Իսկ կէսօրին ներկայ եղաւ նաշնորհները, զարմեալ Զինուորական Հրամանատարութեան կողմէ տրուած ի պատիւ Ն. Վեհափառութեան Ռաուտայի սրահին մէջ:

* 30 Մարտ Ուր. — Կէսօրէ վերջ, Գահիրէէն Ս. Աթոռ ժամանեց Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գահանեան:

Տիրառիթ պարագայ մը եղաւ մեզի համար Ս. Աթոռիս պաշտօնեաներէն Տիար Յակոբեան Եւրոպական մասը՝ որ տեղի ունեցաւ յետ կարճատեւ հիւանդութեան, Մարտ 22ին, կէսօրէ առաջ, ժամը 11.15-ին, տեղւոյս Օղոսդա Վիրթօրիա Հիւանդանոցին մէջ:

Հանգուցեալը ծնած էր Այնթապ, 1885-ին ուսումը առած է Արմաշու Դպրեվանքին մէջ (1897-1903): Ուսուցչական պաշտօններ վարած է Այնթապի Վարդանեան Կրթարանին, Կիլիկեան Ճեմարանին, ինչպէս նաեւ Գաղտարիոյ, Անտիոքայ, Ահնայ Ազգային Վարժարաններուն մէջ (1903-1914): 1915-1918 յիշուոր՝ թրքական բանակին մէջ, 1919-1921 Ռուսցի՝ Այնթապի մէջ:

1922-ին կուգայ Երուսղէմ ուր կ'ընդունուի որպէս պաշտօնեայ Ս. Աթոռոյ զիւանատանց, հետըզհետէ վարելով Հայերէն թղթակցութեանց Տնօրէն ժողովոյ եւ Սիւնն ամսագրի քարտուղարութիւնները եւ ի վերջոյ Ելեմտից Դիւանի հաշուակալութեան պաշտօնը:

Իր թաղմանական արարողութիւնը կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր եւ մասնակցութեամբ բովանդակ Միաբանութեան: Ի զիմաց Ս. Աթոռոյ զամբանական խօսեցաւ Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան, իսկ գերեզմանատան մէջ ի զիմաց Ս. Աթոռոյ զիւանատանց պաշտօնէութեան, խօսեցաւ իր սիրելի բարեկամը եւ պաշտօնակիցը Տիար Կարապետ Յակոբեան: Մարմինը ամփոփուեցաւ Չամ-Թաղի գերեզմանատան մէջ:

Ուղղամիտ, բծախնդիր ու ճշտապահ էր գործելակերպով: Իր մահով բաց մը կը մնայ Ս. Աթոռիս զիւանական յարկէն ներս, իսկ իր բարի ու զուարթամիտ բնաւորութեամբ ստեղծած էր իր շուրջ համակրանքի շրջանակ մը, որուն համար երկար ատեն ան պիտի մնայ իբրեւ յաւէտ կորուած արժանիք մը:

Կ'աղօթենք որ Տէրը լուսաւորէ իր հոգին եւ շնորհէ իր մխիթարութիւնը ի մօրէ եւ այժմ ի հօրէ եւս որբացած իր երկու զուարթերուն ու պարման զուակին:

